

ԱՂՈՅԱԳԻՐՔ, ԹԵ՛ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

3. Ղ ՄԻՐԶՈՍԱՍ

Հարցադրումն առաջին հայացքից կարող է թվալ պարզունակ, գուցե և՛ անիմաստ ու ավելորդ: Բայց դա միայն առաջին հայացքից, իրականում այն ունի սկզբունքային նշանակություն, որովհետև նայած ինչ տեսանկյունից կամ ինչ աշխարհընկալմամբ ու աշխարհայացքով ենք ընթերցում ու մեկնաբանում Նարեկացու գլուխգործոց երկը, ըստ այդմ ստանում ենք համապատասխան արդյունք: Ինչպես ամեն մի ստեղծագործության հեղինակ, այնպես էլ Գրիգոր Նարեկացին ամենից լավ է հասկացել իր անմահ ստեղծագործության թե՛ բնույթը, թե՛ ստեղծման շարժառիթներն ու մտահղացման նպատակը, թե՛ կառուցվածքը և թե՛ իրականացման գաղտնիքներն ու խորհուրդները: Եվ եթե նա իր գլուխգործոցն անվանել է «Մատենան ողբերգութեան», ուրեմն մենք պետք է ամեն կերպ փորձենք այն ընկալել ու մեկնաբանել իսկապես որպես ողբերգություն կամ դրամա: Ավելին, բանաստեղծը իր երկի հիշատակարանում թվարկելով դրա ստեղծման ընթացքում կիրառված հնարները, ասում է, որ այդ ամենի շնորհիվ ստեղծել է «ի հրաշակերտությիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան», որից հետևում է, որ Մատյանը, լինելով միասնական, ամբողջական, կառուցիկ ու վիթխարի հրաշակերտություն, այնուամենայնիվ իր բնույթով մնում է «բազմաստեղնեան», այսինքն՝ բազմակողմանի, բազմաճյուղ, բազմամիտ, բազմաշառավիղ ու բազմապլան ստեղծագործություն: Այլ խոսքով՝ իբրև բազմագիծ ու բազմաչափ երկ, այն պետք է ուսումնասիրվի ու գնահատվի տարբեր տեսանկյուններից ու տարբեր մոտեցումներով, որովհետև միագիծ, միաչափ ու միակողմանի մոտեցմամբ անհնար է ընկալել նրա բազմաբնույթ կամ բազմաստեղծյան բովանդակությունը և հասկանալ նրա խորհուրդն ու իմաստը: Մինչդեռ, հակառակ բանաստեղծի պահանջի, մինչև օրս այն հիմնականում ընթերցվել, ընկալվել, հասկացվել ու մեկնաբանվել է միագիծ ու միաչափ մոտեցմամբ: Այդ է պատճառը, որ, Պ. Սևակի իրավացի կարծիքով, այն «ոչ այնքան ընթերցվել է, որքան համբուրվել, դրվել ոչ այնքան դարակի կամ գրակալի, որքան հիվանդի ճակատի վրա կամ բարձի տակ, ոչ այնքան հասկացվել, որքան զգացվել, ոչ այնքան գնահատվել, որքան պաշտվել»¹:

Իրավամբ հարց է ծագում. իսկ ի՞նչն է պատճառը, որ արդեն ավելի քան հազար տարի մեր ժողովրդի տարբեր սերունդների մտավորական ընտրանին աներևակայելի ճիգ ու ջանք է գործադրում ոչ միայն զգալու, այլև հասկանալու, ոչ միայն պաշտելու, այլև ըստ արժանվույն գնահատելու ուղղությամբ, բայց, ցավոք, ինչպես հարկն է, առայժմ դա նրան չի հաջողվել: Իհարկե, պատճառները շատ են, բայց ամենահիմնականն այն է, որ բանաստեղծի կերտած «բազմաստեղծյան հրաշակերտության» կամ բազմաձայն պատարագի համանվագը փոխարինվել է միաստեղծ կամ միաձայն աղոթքի, որը, ինքնին հասկանալի է, որքան էլ կատարյալ լինի, չի կարող համաճուճ լինել բազմաձայն պատարագի համանվագին,

¹ Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1974, էջ 247:

ինչպես ցանկացած համակարգի թեկուզ ամենակատարյալ տարրը չի կարող փոխարինել ամբողջ համակարգին: Իսկ ի՞նչ հիմքեր ունենք նման եզրակացության համար:

Հայտնի է, որ, սկսած XII դարի կեսերից, նախ Կիլիկյան Հայաստանում, իսկ ապա Մեծ Հայքում աստիճանաբար մեծանում է հետաքրքրությունը Նարեկացու մատենագրական ժառանգության և հատկապես Մատյանի, ինչպես նաև բանաստեղծի կյանքի ու գործունեության հանդեպ: Իբրև այդ հետաքրքրության արդյունք XIII դարակեսից ի հայտ են գալիս Մատյանի մի շարք լուծմունքներ, որոնց հեղինակները, նարեկացիագետ Պ. Խաչատրյանի գնահատմամբ, հիմնականում «ծանրության կենտրոն են դարձրել Նարեկացու գեղարվեստական-իմաստասիրական վաստակի աստվածաբանական շերտերի բացատրությունը: Նրանք սկետուն որոնումով պարզել են Նարեկի գրավոր գլխավոր ակունքը՝ Սուրբ Գիրքը: Անշուշտ, այդ հարցում նրանք խախտել են չափի զգացումը՝ Նարեկացու հանճարի ինքնաբուխ ամեն մի փայլատակում հախուռն ձգտումով ենթարկելով Հին և Նոր Կտակարանի բառին ու տառին: Այդ մեքենական նույնացումը նպաստում էր հայ կյանքում Նարեկացու հանդեպ ակնածանքի խորացմանը, նրա կերպարի սրբացմանը»² (ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Նարեկացու գլուխգործոցի հանդեպ միջնադարյան մեկնիչների դրսևորած ծայրահեղ միակողմանի վերաբերմունքն ըստ էության շարունակվում է նաև նոր շրջանում, որը տևում է ընդհուպ մինչև մեր օրերը: Դա լավագույնս երևում է Մատյանի հրատարակությունների վերնագրերից: Պարզվում է, որ սկսած առաջին տպագրությունից (Մարսել, 1673) մինչև 1981թ. ներառյալ Մատյանն ունեցել է 59 ամբողջական (բացի առաջինից) և 3 քաղվածո հրատարակություն: Այն «ամենից շատ տպագրվել է Պոլսում (թվով 32), այնուհետև՝ Վենետիկում (15, որոնցից երկուսը քաղվածո), Երուսաղեմում (6) և Ջմյուռնիայում (3): Մեկական հրատարակություններ են տվել Մարսելը (թերի), Փարիզը, Թիֆլիսը, Բուենոս Այրեսը, Դելմարը և Երևանը (քաղվածո)»³: Մատյանի հրատարակության այս վիճակագրությունը, լինելով ինքնին շատ պերճախոս, անչափ ուշագրավ է հատկապես աշխարհագրական տեսակետից. առնվազն զարմանալի է, որ արևելահայ տպագրական բազում կենտրոններում (Երևան, Էջմիածին, Թիֆլիս, Օուշի, Նոր - Զուղա, Մադրաս, Կալկաթա, Աստրախան, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ և այլն) այն ունեցել է ընդամենը մեկ ամբողջական (Թիֆլիս, 1905) և մեկ քաղվածո հրատարակություն (Երևան, 1977, խոսքը վերաբերում է Նաում Գրեբենի ռուսերեն թարգմանության հանդիպադիր գրաբար հատվածների տպագրությանը):

Հետաքրքիր պատկեր է ի հայտ գալիս նաև այդ հրատարակությունների վերնագրերի, մասնավորապես անվանաթերթերի համեմատությունից: Դրանցից (59+3)⁴ 33-ում (31+2) Նարեկացու գլուխգործոցն անվանված է «Գիրք աղօթից», «Նարեկ. Գիրք աղօթից», «Նարեկ աղօթից» և այլն, այսինքն՝ Մատյանն ընկալվել ու ընթերցողին է մատուցվել որպես աղոթագիրք կամ աղոթամատյան: Մնացած 29 հրատարակություններից (28+1) ընդամենը 17-ում է, որ այն ունի «Մատենան ողբերգութեան» վերնագիրը: Այլ խոսքով՝ վերջինս կյանքի է կոչվել անհամեմատ ավելի ուշ: Ընդ որում, վերջնական տեսք ստացած «Մատենան ողբերգութեան»

² Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 381:

³ Դրանց մանրամասն նկարագրությունը տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 197-225:

⁴ Նույն տեղում, էջ 225:

⁵ Փակագծերի մեջ առնված գումարելիներից առաջինը նշանակում է ամբողջական, իսկ երկրորդը՝ հատվածական հրատարակություն:

վերնագրով հրատարակություններից շատերի վրա այս կամ այն ձևով զգացվում է Մատյանի՝ որպես աղոթագրքի ընկալման անջնջելի կնիքը: Օրինակ, 1833 թ. վեներտիկյան հրատարակության մեջ թեև առաջին անգամ կոչվել է Ողբերգություն, բայց երկրորդ անվանաթերթին գրված է՝ «Սրբոյ Գրիգորի Նարեկացոյ աղօթք», իսկ Բուենոս Այրեսի հրատարակությամբ (1948) պարզապես կոչվում է «Նարեկ. Մատեան ողբերգութեան Ս. Գրիգոր Նարեկացիի»: «Մատեան ողբերգութեան» երկի՝ իբրև աղոթագրքի ընկալման լավագույն վկայություն է հատկապես այն փաստը, որ սկսած 1807 թ. վեներտիկյան հրատարակությունից՝ նրանում տպագրվել է նաև «Ցուցակ աղօթից» վերնագրով մի ցանկ, որը հետո, վերանվանվելով «Դրունք զխոց աղօթից», հանդիպում է «Մատեան ողբերգութեան» վերնագրով հետագա բազմաթիվ հրատարակություններում, այդ թվում նաև XX դարում իրականացվածներից մի քանիսում (Տփղիս, 1905, Երուսաղեմ, 1936, 1964):

Եթե այդպիսին է Նարեկացու գլուխգործոցի միջնադարյան մեկնությունների, ինչպես նաև տպագիր հրատարակությունների ընդհանուր պատկերը, ապա իրավամբ հարց է ծագում՝ իսկ որպես ինչ են հասկացել ու մեկնաբանել նոր շրջանի ականավոր նարեկացիագետներ Հակոբ Նայյանն ու Գաբրիել Ավետիքյանը, որոնք մեծապես ազդել են նարեկացիագիտության հետագա ընթացքի վրա: Անվարան կարող ենք ասել, որ երկուսն էլ այն ըմբռնել ու մեկնաբանել են զուտ որպես աղոթագիրք⁵: Ի հաստատումն ասվածի՝ ճիշտ կլինի բերել նրանց աշխատությունների վերնագրերն ըստ երկրորդ անվանաթերթի՝ 1. «Մեկնութիւն աղօթից և ներբողինաց սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակերան վարդապետի, շարադրեալ և մեկնեալ մեծաւ զգուշութեամբ և շրջահայեցութեամբ ի Յակոբայ Արք Եպիսկոպոսէ և Պատրիարքէ Կոստանդնուպոլսոյ աստուածաբան կոչեցելոյ յԱմի տեառն 1745 դեկտեմբերի ԻԲ» (այսուհետև՝ **Հ. Նայեան**, Գիրք մեկնութեան, և էջը), 2. «Նարեկ աղօթից համառօտ և զգուշատր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նորին տեառն Հ. Գաբրիէլի Աւետիքեան աթոռակալ վարդապետի, ի վեներտիկ, ի վանս սրբոյն Ղազարու, 1827, ՌՄՀԶ» (այսուհետև՝ **Գ. Ավետիքյան**, Նարեկլուծ... և էջը): Ինչպես տեսնում ենք, նրանք նույնպես Մատյանն ընկալել ու մեկնաբանել են գերազանցապես կրոնական ու աստվածաբանական տեսանկյունից՝ անտեսելով նրա երկրային ու աշխարհիկ խորքը: Ընդ որում, թեև Գ. Ավետիքյանը առաջիններից մեկն է, որ ցույց է տվել Նայյանի աշխատության այդ կարգի թերությունները, բայց ինքը նույնպես չի կարողացել ազատվել դրանցից: Նա գրել է. «Ամենեցունց գրասիրաց ակներև կայ ընդարձակ մատեանն, զոր ի մերում դարու երևեցոյց Յակոբ պատրիարզն Նայեան տպագրութեամբ ի Կոստանդնուպոլիս յամին 1745. յորում բաց յաղօթական բանիցն և ճառս սրբոյ վարդապետին առնու ի բացայայտութիւն: Արդա՛րև աշխատութիւն բազում յանձն առեալ ի գրել, որպէս և երևի, բայց ընդարձակութեամբն յայլ խօսս վարդապետականս, կամ բանասիրականս՝ ոչ ժամանեալ տալ ճշգրիտ տեղեկութիւն առաջի եղելոց բանիցն»⁶

⁵ Հարկ է նշել, որ այդօրինակ ընկալումն ու մեկնաբանումը շարունակվում են նաև մեր օրերում: Օրինակ, Թորոզոս եպիս. Գուշակյանի արդի հայերեն թարգմանության՝ Անթիլիասի (1999) հրատարակությունը վերնագրված է «Նարեկ. աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացոյ»: Ավելին, գրքին կցված «Յատկաորոշութիւն գլուխներու» վերնագրի տակ Մատյանի բոլոր գլուխները դասակարգված են որպես տարաբնույթ աղոթքներ, բացի ԻԶ և Ջ գլուխներից, որոնք գետնելված են «Ուղերձ առ Ս. Աստուածամայրն» վերնագրի տակ, իսկ Ա. Բ. և Ը գլուխները նշված են նույնիսկ երկու տարբեր նպատակների համար: Աշոտ Պետրոսյանը վերջերս հրատարակած «Նարեկը՝ բժշկարան» (Բերձոր, 2002) գրքում «Նարեկն իբրև աղօթագիրք» ենթաբաժնում պարզորոշ գրել է. «Խորհրդաբայ գրականագետները Նարեկը բնորոշել են իբրև գեղարվեստական երկ, պոեմ: Իրականում Մատյանն աղօթագիրք է: Աղօթքը խոսք է ուղղված Աստծուն» (էջ 43):

⁶ Գ. Ավետիքյան, Նարեկլուծ..., էջ Է:

(ընդգծ. իմն է - Հ. Մ.): Ծիշտ է, Գ. Ավետիքյանն այլևս չի ծավալվում «յայլ խօսս վարդապետականս, կամ բանասիրականս» և տալիս է անհամեմատ ավելի «ճշգրիտ տեղեկությունն առաջի եղելոց բանիցն», բայց և այնպես ինքը ևս, Մատնյանն ընկալելով զուտ որպես աղոթագիրք, հիմնականում ուշադրություն է դարձնում մեկնվող տեղիների կրոնական ու բանասիրական երեսներին՝ չտեսնելով դրանց իրական բովանդակությունը: Ուստի նրանց մեկնությունների տարբերությունը զուտ քանակական է և ոչ թե որակական, որը լավագույնս երևում է Մատնյանի 65-րդ գլխի մեկնությունների համեմատական վերլուծությունից (իսկ թե ինչու ենք ընտրել հենց այս գլուխը, կտեսնենք հետո):

Խնդրո առարկա գլխից Նայյանը մեկնել է 49 բառ, արտահայտություն կամ ամբողջական միտք, մինչդեռ Ավետիքյանը մեկնել է ընդամենը 15 բառ կամ բառակապակցություն: Փաստորեն Ավետիքյանն ավելի քան երեք անգամ պակասեցրել է մեկնվող նյութը և, ի տարբերություն Նայյանի, մեկնության առարկա է դարձրել հիմնականում երկու կամ երեք բառից բաղկացած արտահայտություն (համապատասխանաբար՝ 8 և 5), իսկ մեկական անգամ՝ մեկ բառ և ապա՝ չորս բառանոց արտահայտություն: Ավելին, Ավետիքյանի մեկնած 15 տեղիներից 10-ը այս կամ այն ձևով առկա են նաև Նայյանի երկում, այսինքն՝ Ավետիքյանը չի մեկնել Նայյանի մեկնածներից 39-ը, իսկ ավելացրել է ընդամենը 5-ը: Առանձնապես ուշագրավ է այն փաստը, որ երկու դեպքում Ավետիքյանը մեկնել է Նայյանի մեկնած բառակապակցության անմիջական շարունակությունը կազմող բառերը: Օրինակ, եթե Նայյանը մեկնել է Նարեկացու «ի մեկնելս իմում մի՛ հեռասցի սրբութիւնդ» մտքի «ի մեկնելս իմում» հատվածը, ապա Ավետիքյանը քննության առարկա է դարձրել «մի հեռասցի» արտահայտությունը: Ավելի հետաքրքիր ու կարևոր է երկրորդ դեպքը. Նայյանը մեկնել է Նարեկացու «Աւա՛ղս ինձ աստանար ի թիւս հագարաց» մտքի «Աւա՛ղս ինձ աստանար» հատվածը, իսկ Ավետիքյանը՝ «ի թիւս հագարաց» արտահայտությունը: Քանի որ ներկա հոդվածի բուն նպատակը հենց Բան 65-ի Գ ենթագլխի վերջնամասի նորոպի մեկնությունն է, ուստի մախ տեսնենք, թե ինչ է ասում բանաստեղծն այս գլխում: Այն սկսվում է հետևյալ տողերով.

**Եւ արդ, ես՝ նախնիս ամբարշտաց,
Գլուխս մեղաւորաց, պետս անիրաց,
Առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց,
Ատտիկեցիս ըստ վատթարութեան, այլ ոչ ըստ բարեբաստութեան,**

Բանաստեղծի ինքնաբնութագրական այս որակումներն ըստ էության ունեն օտար ծագում, այդ պատճառով անկեղծ գայրույթով շարունակում է.

**Ահա զանճառիցն իմոց ճառեցի,
Զպատկաւտելիսն խայտառակեցի
Զգաղտնիսն հրապարակեցի,
Զծածուկսն յայտնեցի,
Զթաքուցեալսն ցուցի,
Զամփոփեալսն տարածեցի
Զդառնութեանս մաղձ ժայթքեցի,
Զգործակցութիւն չարին մատնեցի,
Զամբարեալ թարախ վիրիս քամեցի,
Զխորս պարտեաց իմոց ծանուցի,
Զպատրուակն կեղծեաց առի,
Զքող տգեղութեանն վերացուցի,
Զամաթալեացն զգետս մերկացուցի,
Զգարշելիսն յանդիմանեցի,
Զմրորն մահու փսխեցի,
Զպալարս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի:**

Եթե նախորդ հատվածում Նարեկացին իրեն անվանում էր ամբարիշտների նախնի, մեղավորների գլուխ, անիրաւների պետ, պարտաւորներից առաջին, յանցաւորների պատկեր կամ տիպար, ատտիկեցի ըստ վատթարութեան և ոչ թե ըստ բարեբաստութեան, ապա այստեղ արդէն գնահատում է իր կատարածը՝ ասելով այնպիսի բաներ, որոնք ուղղակիորեն վկայում են բանաստեղծի մինչ այդ կրած անհուն տառապանքների մասին: Դրանք այնքան են դառնացրել նրան ու թունավորել, որ հրաքուխի պէս ժայթքելով՝ ասում է, որ «Չդառնութեանս մաղձ ժայթքեցի», «Չամբարեալ թարախ վիրիս քամեցի», «Չգարշելիսն յանդիմանեցի», «Չմրորն մահու փսխեցի», «Չպալարս հոգոյս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի»: Քանի որ այս ամենը խիստ անհարիր է աղոթքին, հետևաբար ոչ թե կատարած մեղքերի խոստովանությունն է, այլ տարիների ընթացքում կրած հալածանքների, անհիմն մեղադրանքների ու բամբասանքների հետևանքով բանաստեղծի հոգում կուտակված թույնի, մաղձի ու դառնութեան մրորի հանկարծակի ժայթքում, ուստի և՛ գարշելիների հանդիմանություն: Հարկավ, բանաստեղծը հեշտությամբ չի կատարել իր այդ քայլը, այլ երկար մտածել է իր անելիքի հետևանքների մասին, ծանրութեթե է արել ապասվելիք վտանգները, բայց զգալով, որ այլևս անհնար է հանդուրժել, այրել է նահանջի բոլոր կամորջները ու նետվել անձնուրաց կովի՝ հաղթանակի համար ապավինելով Յիսուսին, բայց առաջին հերթին հավատալով իր անսպառ ուժերին: Նման եզրակացության հիմք են տալիս նույն ենթագլխի երկրորդ հատվածում բանաստեղծի արտահայտած հետևյալ մտքերը.

Յանձինս վտանգ ոչ անխայեցի,
Մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի,
Չարմատն հնութեան տեսիլ արարի,
Բնութեանս կարեաց ոչ ողորմեցայ,
Չմիաբանութեանն կապ խզեցի,
Չդղեակ սրտիս քանդեցի,
Ընդ կամացս որսոյ, իբր ընդ դարանակալի մահու, կոռուցայ,
Չպահեստ անյայտիցն արտաքս հանի,
Չմթերիցն գանձ մեծին գուշակեցի,
Չդատախազն դատաւորին հանդէպ կացուցի,
Չապառնեացն փորձ այժմէն իսկ գտի,
Չդաշն կործանողին կտրեցի,
Չուխտն խաբողին ցրուցի,
Չկատարած մարտին յաղթութեան ի քեզ, տէր Յիսուս, ապաստանեցի,
Չպատերազմին խումբ գրգռեցի,
Չդիմադրութիւն դիմեցմանն՝ բանիդ աստուծոյ յուսացայ,
Չխաւարասիրացն փաղանգ լուսեղինացն զհնուց սաղբեցի:

Իսկ անհա Բ ենթագլխում բանաստեղծն Աստծուց խնդրում է.

Չաստէն դարովեալս յայսպիսեաց բանից
Եւ գհարուածեալս յայսքանեաց գանից
Մի՛ կշտամբեցես կրկնակի դատել ի մեծի ատուրն:

Փաստորեն բանաստեղծն Աստծուց խնդրում է, որ այսպիսի խոսքերից «դժբերութեամբ» և «այսքան գաներով հարվածված» իր անձը ահեղ դատաստանի օրը կրկնակի, այսինքն՝ երկրորդ անգամ չդատվի: Բացի այդ, թեև Մատյանում այս ամենը ներկայացվում է որպէս ինքնապարսպակնք ու ինքնադատաստան, մինչդեռ իրականում դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ սատանայի, ավելի ճիշտ, սատանայակերպ մարդկանց սադրանք ու խարդավանք: Բանն այն է, որ նախ, այդուհանդերձ, Աստծուց խնդրում է Մատյանի նվագներով լցնել «Անարգանաւք ամաւթոյ

զղէմս սատանայի», իսկ իր ամոթահար դեմքը լցնել խաչի նշանով, լույսի աստվածային կնիքը միացնել «ի գեղ տեսակիս», ամբողջան նշանը հաստատել «ի տիպ դիտակիս», կենաց փայտի նշանը ձևացնել «ի պատկեր այտիս», իսկ հրաշքների արվեստը «ի ճակատիս շո'րք» նշանակվի, այսինքն՝ բանաստեղծն իրեն արժանի է համարում աստվածային գթության և խորապես համոզված է, որ Աստված կկատարի իր խնդրանքները: Երկրորդ, առանձնապես ուշագրավ է այն փաստը, որ շարունակության մեջ ստեղծագործողը մտահոգ է ոչ այնքան այսերկրային, որքան հետմահու կյանքի մասին: Ըստ այդմ, ամբողջ Գ ենթաալիսում Տիրոջից խնդրում է, որ նրա անվամբ օրհնվի իր հանգստյան վիճը, ողորմությամբ լցվի իր գերության գուրը, Տիրոջով ընդլայնվի իր թշվառության վայրը, իր համար անդորր լինի բարկության բանտը, իրեն սնի «սո յաճումն արգանդն մթութեան», Տիրոջ հույսով իրեն շտեմարանի «յարկն այն անձկութեան» և այլն: Ակնհայտ է, որ բանաստեղծի հայացքն այստեղ ուղղված է ապագային, քանզի, ինչպես ասվեց, նրան մտահոգում են հենց մահվանից հետո իրեն սպասվող դժվարություններն ու նեղությունները, ուստի Տիրոջից խնդրում է թեթևացնել դրանք: Բայց ասիա ենթաալիսի վերջավորության մեջ հեղինակը հայացքը կտրուկ շրջում է ներկային՝ ասելով.

**Աւա՛ղս ինձ ստտանար ի թիս հագարաց,
Զի որ երբեմն էի վերնային, եւ այժմ՝ անդնդային,
Երբեմն՝ տաւնելի, եւ այժմ՝ աշխարելի:**

Նայանը, մեկնելով «աւա՛ղս ինձ ստտանար» բառակապակցությունը, գրում է. «Այսինքն հագարիցս ինձ ւաւղ կարդացքք. զի երբեմն ի վերայ հողոյ կոխատէի և այժմ անդնդային եղէ վերագնացս ի հող մահու տքնիլով»⁷: Դժվար չէ տեսնել, որ Նայանը բանաստեղծի այս խոսքերը նույնպես դիտել է հետմահու կյանքի համար ասված, ուստի բանաստեղծին է վերագրել մտքեր, որոնք չեն բխում նրա ասածից: Օրինակ, բերված հատվածում չկան «ի վերայ հողոյ կոխատէի» և «վերագնացս ի հող մահու տքնիլով» մտքերը և չեն բխում բանաստեղծի ասածից: Նույնիսկ կամայական է «վերնայինը» «վերագնացս» դարձնելը, որով հետև դրանք բնավ նույնը չեն:

Ավետիքյանն, ընդհակառակը, մեկնել է «ի թիս հագարաց» արտահայտությունը, բայց, ըստ էության, հակացել ու բացահայտել է նույն ձևով: Ըստ այդմ գրում է. «Այսինքն հագար անգամ ւաւղ ինձ. և ըստ շարադրութեանն պարզի՝ ւաւղ հագար թուով կամ ի հագար նուագս. զի բառն հագար՝ որ ածական է թուոյն, եղեալ է ի սեռական հոլով իբրև յատկացուցիչ, ըստ ոճոյն ի բանն ԾԸ, ԼԾ. 4: Իսկ եթէ հագարաց զատ առնուցումք, որպէս թէ հագար անձանց, բացատրի, ւաւղ ինձ պատշաճի ընդ այլոց հագարաւոր անձանց. զի խօսի հասարակաց թշուառութեանէ մարդկան ըստ մահկանացու վիճակին, որով այն որ երբեմն վերնային էր, այսինքն շրջող ի վերայ երկրի, այլև տօնելի, զուարճալի, միտք ուրախութեան, մահուամբն և թաղմամբն լինի անդնդային, ի խորս երկրի ընդ հոլով, և աշխարելի, ողբալի, միտք սգոյ»⁸ (ընդգծ. հեղ. է - Ն. Մ.): Ինչպես տեսնում ենք, Ավետիքյանը նույնպես բանաստեղծի միտքն ընկալել է հետմահու կյանքի իմաստով և մեկնաբանել որպես գերեզմանում գտնվողի խոհեր հենց գերեզմանի ու գերեզմանում գտնվողների մասին, և, ըստ այդմ, ավելի է մեծացրել հավելումների թիվը: Բայց, կրկնում ենք, բանաստեղծը հետմահու կյանքի մասին խոսում է ապառնի ժամանակով, իսկ խնդրո առարկա հատվածում համեմատում է իր անցյալն ու ներկան և ցավում, որ ներկայում դարձել է անցյալում եղածի հակապատկերը, այսինքն՝

⁷ Ն. Նայան, Գիրք մեկնութեան..., էջ 477:

⁸ Ավետիքյան, Նարեկում... էջ 333:

անցյալում եղել է վերնային ու տոնելի, բայց այժմ անդնդային և աշխարելի է: Իսկ ի՞նչ է նշանակում լինել վերնային: Հարցի պատասխանն ստանալու համար դիմենք Հայկազյան լեզվի բառգրքին, որի հեղինակներից մեկը հենց ինքը՝ Ավետիքյանն է: Նրանում կարդում ենք. «Վերնային, լնոյ, ոց. ա...: Վերին, վերնական, երկնային: Առաջնորդ գեղեցկացն, և վերնայնոյն առիթ: Սպիտակագգեստը՝ վերնային պարկեշտութեան հաւանութեամբն. Ածար. աղք: Փիլ. տեսական: Վերնայնոցն զհետ երթալ. Յճխ. Ժա: Ընդ վերնայնոցն կցորդութեան անկապուտ փառաց: Երբեմն էի վերնային, և այժմ անդնդային: Կամար վերնայինն երկնի: Ամրացո՛ւ՝ վերակացութեամբ վերնայնոց. Նար. Մք. Կե. Հե. Ջդ: Աւետիս տալ վերնայնոցն. Եփր. համար»⁹: Պարզ երևում է, որ ամբողջ բառհողվածում ակնարկ իսկ չկա երկրայինի, առավել ևս երկրի վրա քայլելու մասին, այլ, ճիշտ հակառակը, նկատի է առնվում վերերկրայինը, այսինքն՝ երկնայինը¹⁰: Բնականաբար վերնայինը՝ երկնայինը, նաև տոնելի էր ու ուրախառիթ, իսկ դրանից զրկվելն ու զրկվածությունը՝ աշխարելի, այսինքն՝ «ողբալի, աւաղելի, եղկելի, լալոյ արժանի» (նույն տեղում, հ. 1, էջ 259):

Հարկավ անհնար է ստուգապես որոշել ականավոր նարեկացիագետների մեկնաբանության աղբյուրը, սակայն անկասկած է, որ նրանցից առաջ եղել է նմանօրինակ մտածողություն: Օրինակ, XVIII դարի առաջին կեսի Սպահանի հայոց թեմի առաջնորդներ Մովսես Ա Ջուղայեցու (1706-1725) և Դավիթ Բ Ջուղայեցու (1725-1728) տապանաքարերի վրա գրված է.

Վայ ինձ զի որ երբեմն էի վերնային,
Վաղճանեալ ի կենցաղոյս եղալ յայսմ տեղի,
Ջոր եւ խնդրեմ եկելոցդ յայսմ տեղի,
Անխիղճ կոխել զերեսս, զոր եւ իսկ եմ արժանի¹⁰:

Այո՛, «վաղճանեալ ի կենցաղոյս» առաջնորդները թերևս իրավունք ունեին մահվանից առաջ պատվիրել իրենց տապանաքարի վրա այսպես գրելու, բայց հանճարեղ բանաստեղծը ստեղծագործական տարերքի պահին երբեք չէր կարող իրեն պատկերացնել այս կյանքում մահացած ու արդեն թաղված:

Իսկ ի՞նչ ենք առաջարկում, կամ ո՞րն է խնդրո առարկա հատվածի իրական իմաստը: Արդեն ասվել է, որ բանաստեղծը տվյալ դեպքում համեմատում է Մատնայանից առաջ և Մատնայանը գրելու պահին իր ունեցած վիճակները, որոնք, լինելով կատարելապես հակադիր, խորապես վշտացնում են նրան: Այդ է երևում ոչ միայն «երբեմն էի» և «այժմ» բառերից, այլև «աստանար» բառից, որը թեև հիմնականում ունի տարածական իմաստ, բայց համաձայն Հայկազյան լեզվի բառգրքի՝ կարող է նշանակել նաև. «Որ ինչ աստ կամ յաստի կեանս է, արդի, սա տեղի, հիմակուան»¹¹ և այլն: Այստեղից հետևում է, որ «աստանար ի թի:ս հազարաց» արտահայտությունը պետք է հասկանալ ժամանակ ու թվականություն ցույց տվող իմաստով, որը ճիշտ Մատնայանը գրելու ժամանակն է կամ երկու հազարամյակների սահմանագիծը: Այսօր արդեն ոչ մի տարակոյս չկա, որ Նարեկացին այն սկսել է գրել 1000 թվականին, այսինքն՝ առաջին հազարամյակի վերջին տարում և ավարտել 1003 թվականին կամ երկրորդ հազարամյակի երրորդ տարում: Հետևաբար, եթե բանաստեղծն ասում է, որ «երբեմն էի վերնային, եւ այժմ անդնդային, // Երբեմն տաւնելի, եւ այժմ՝ աշխարելի», նկատի ունի առաջին հազարամյակում

⁹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Եր., 1981, էջ 814:

¹⁰ Ուշագրավ է, որ աշխարհաբար թարգմանիչներից Տրապիզոնին և Գևորգյանը վերնայինը թարգմանել են հենց երկնային, իսկ Գուշակյանը և Խերանյանը պահել են նույնությամբ:

¹¹ Այս փաստը վերցրել ենք Լ.Գ. Միմասյանի «Սպահանի հայոց թեմի առաջնորդներ» գրքից (Նոր Ջուղա, 1996, էջ 56 և 60):

¹² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, էջ 317:

իր ունեցած վերնային և տոնելի, իսկ երկրորդ հազարամյակի սկզբում, որ ներկա էր, անդնդային ու աշխարելի դարձած վիճակները: Իսկ եթե հիշենք, որ բանաստեղծը մինչ այդ բանիվ, գրչով ու գործով ամեն ինչ արել էր կուսակրոն հոգևորականի կոչմանն արժանի լինելու և մահվանից հետո երկնային թագավորությանը, այսինքն՝ կենաց գրքում գրանցման արժանանալու համար, բայց 997 թ. ստացած հարվածի¹² հետևանքով զրկված էր դրա հնարավորությունից, ապա իսկապես կընդունենք, որ տվյալ դեպքում նկատի ունի հենց իր ներկա վիճակը: Հետևաբար, քանի դեռ չէին չեզոքացված նախորդ հազարամյակի վերջերին բանաստեղծի ստացած ծանր հարվածի հետևանքները, բնականաբար շարունակվելու էր նրա անդնդային ու աշխարելի վիճակը, ուստի և՛ ցավի ու աստուանքի զգացումը: Որ իսկապես «անդնդային» և «աշխարելի» հասկացությունները աստվածաբանական գրականության մեջ գործածվում էին ի հակադրություն «երկնայինի», «վերնայինի» և «տոնելիի», ունենք XVII-XVIII դարերի ականավոր փիլիսոփա ու աստվածաբան Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու չափազանց արժեքավոր վկայությունը. երբ սատանան և Ադամը, գրում է նա, փորձեցին, դերազանց լինել, Աստված բարկացավ ու պատժեց նրանց, որի հետևանքով սատանան «անկաւ ի բարձանց և յաստիճանաց իւրոց և եղև անդնդային և դժոխային», իսկ Ադամը «անկաւ ի բարձրութենէ իւրմէ, և արտաքս անկաւ ի դրախտէն, և մերկացաւ ի լուսեղէն պատմունանէն, և ի մարգար[է]ութենէ, և ի թագաւորութենէ, և ի քահանայութենէ և յայլոցն»¹³ (ընդօժ. իմն է - Հ. Մ.):

Նույնիսկ ավելորդ է ասել, որ թե՛ սատանան և թե՛ Ադամը, պատժվելով Աստծուց, ոչ թե մահացել էին, այլ պարզապես զրկվել էին իրենց ունեցած առավելություններից: Ըստ էության նույնն էր նաև Նարեկացու պարագան, քանզի նա նույնպես իրեն զգում էր երկնային կյանքի հնարավորությունից զրկված, բայց ոչ երբեք՝ մահացած: Այդ է հաստատում բանաստեղծն ինքը նույն գլխի հաջորդ ենթազխում, ուր կարդում ենք.

Այլ եւ արդ կրկին դու արհմնեալ ի բոլորից գոյից՝
 Յերկնայնոց եւ ի ստորնայնոց
 Եւ ի սանդարամետականաց մեռելոց,
 Անպարտականդ այս տարագրութեան,
 Ե՛ս վրիպեցայ, ե՛ս ատարացայ,
 Ե՛ս յիմարեցայ, պարտեցայ եւ խտան գտայ,
 Ե՛ս լքայ, կասեցայ եւ կործանեցայ,
 Ե՛ս մոլորեցայ, ե՛ս մատնեցայ, ե՛ս մերժեցայ,
 Ե՛ս խորթացայ, գերեցայ եւ գայթակղեցայ,
 Ե՛ս նզովեցայ, ե՛ս թշուառացայ, արբեցայ եւ վատթարացայ,
 Ե՛ս ընկլուզայ, ե՛ս խաբեցայ, ե՛ս անարիւնեցայ,
 Ե՛ս ապականեցայ, մահացայ եւ իսպառ եղծայ:
 Չիք քո առ այս ինչ մատն չարի,
 Որ ես միայն անփոփոխ բարի:

¹² Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկացու անեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, № 1:

¹³ Յովհաննես վրդ. Ջուղայեցի, Չորեքտասան աստիճան հաւատոյս և գործոյ, Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատուն, ձեռ. թիվ 698, էջ 12ա: Ցավոք, ժամանակին հնարավորություն չունենալով օգտվելու Նոր Ջուղայի ձեռագրատան նյութերից, Հովհաննես Ջուղայեցու այս փոքրիկ աշխատությունը չի արտացոլվել «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» (Եր., 2001) մենագրության մեջ: Օգտվելով պատեն առիթից՝ խորին շնորհակալությունս եմ հայտնում Սպահանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ գերապատիվ տեղ. Բաբկեն Մ. վրդ. Չարյանին և Պատգամավորական ժողովի ատենապետ մեծարգո Թաթուլ Օհանյանին՝ Նոր Ջուղայի գրադարան-ձեռագրատան նյութերից օգտվելու կարելիություն ստեղծելու համար:

Բերված հատվածի առաջին երեք տողում բանաստեղծը փառաբանում է Աստծուն, իսկ չորրորդ տողում նրան հայտարարում է անպարտական իր «այս տարագրութեան» համար, իսկ տարագրութիւն բառը Հայկազյան լեզվի բառգրքում բացատրված է՝ «տարագրելն, տարագրիլն, վտարանդութիւն, մերժումն, և Օտարութիւն կամ խոտորումն» (հ. 2, էջ 851): Իսկ ի՞նչ տարագրության, վտարանդության, մերժման, օտարության կամ խոտորման մասին է խոսքը: Որ դա վերաբերում է հենց բանաստեղծին, հաստատվում է հաջորդ տողերում, որտեղ աներկբա խոստովանում է, որ ինքն է վրիպել և օտարացել, ինքն է հիմարացել, պարտվել և խոտան դարձել, ինքն է լքել, նահանջել և կործանվել, ինքն է մոլորվել, մատնվել և մերժվել, ինքն է խորթացել, գերվել և գայթակղվել, ինքն է նզովվել, թշվառացել, արբեցել և վատթարացել, ինքն է սուզվել, խաբվել ու անօրհնել, վերջապես՝ ինքն է ապականվել, մահացել ու իսպառ եղծվել: Այս ամենից հետո բանաստեղծն իր պարտքն է համարում ասելու նաև, որ Աստված ոչ մի մեղք չունի, քանզի նա «միայն անփոփոխ բարի» է: Վերը թվարկված հանձնառական արտահայտություններից առանձնապես կարևոր է նզովվելը, որը ուղղակիորեն կապվում է «այս տարագրութեան» արտահայտության հետ, քանզի բանաստեղծը կարող էր երկնային, վերնային ու տոնելի կյանքի հնարավորությունից զրկվել ու տարագրվել երկրային, անդդային ու աշխարելի կյանքի միայն ու միայն նզովքի հետևանքով: Իսկ դա նրա համար համարժեք էր մահվան, ուստի միանշանակ ասում է «մահացայ եւ իսպառ եղծայ», անկասկած դա հասկանալով ոչ թե ֆիզիկական, այլ հոգևոր ու հոգեկան իմաստով: Այսպիսով, «ի թիւս հազարաց» արտահայտությունը պետք է հասկանալ ոչ թե որպես բանաստեղծին «հազարիցս... ասաղ» կարդալու խնդրանք, ինչպես բացատրել է Նայյանը, և ոչ էլ իբրև «այլոց հազարատր անձանց» հետ ավաղ ասելու ցանկություն, որպես մեկնաբանել է Ավետիքյանը¹⁴, այլ իբրև երկու հազարամյակների սահմանագծում գտնվող թվական, որն իրարից բաժանում ու իրար է միացնում այդ հազարամյակները: Իսկ այդպիսի թվական կարող ենք դիտել թե՛ 1000, թե՛ 1001 և թե՛, որոշ իմաստով, 1002 թվականը: Բանն այն է, որ համաձայն ժամանակի մասին նարեկյան դպրոցում ընդունված պատկերացման՝ որքան էլ ժամանակ ցույց տվող միավորները գատված են իրարից, այնուամենայնիվ նրանց միջև կա ներքին ինչ-որ կապ ու անընդհատություն, որի շնորհիվ ժամանակի ընդհատ, իրարից գատ միավորները ցույց են տալիս ժամանակային անընդհատ հոսք, որտեղ ցանկացած միավոր, լինելով անցածի, նախորդ պահի ավարտի ցուցիչ, միաժամանակ դառնում է հաջորդի սկիզբ: Օրինակ, տարվա վերջին օրը, ավարտելով անցած տարին, միաժամանակ հանդես է գալիս որպես հաջորդ տարվա սկիզբ: Հարկավ, սա պետք է հասկանալ ոչ բացարձակ իմաստով, այլ իբրև հնարավորություն, այլապես կընդհատվեր հին ու նոր տարիների կապն ու միասնությունը: Այս մասին ունենք Գրիգոր Նարեկացու ուսուցիչ Անանիա Նարեկացու չափազանց արժեքավոր դատողությունը, որը մեզ հիմք է տալիս կատարելու այսօրինակ եզրակացություն: Իր «Սակս բացայայտութեան թուոց» երկը Անանիա Նարեկացին ավարտում է հետևյալ մտքով՝ «և որպէս անցեալ ամն հնացեալ վախճան առնու, և վերջին օրն անցեալ ամին կատարումն և նորոյ ամին սկիզբն ի միջոցի կալով ունի մասն ինչ ի հնոյն և հաղորդութիւն ունի ընդ նորոյն ամոյն՝ սկիզբն գոլով»¹⁵ (ընդգծ. իմն է - Ն.Մ.): Եթե

¹⁴ Ի դեպ՝ աշխարհաբար թարգմանիչներից ոմանք, ավելի առաջ գնալով, «ի թիւս հազարաց»-ը դարձրել են «քյուր-հազար անգամ» (Սեբասյան), «քյուր հազար անգամ» (Գևորգյան):

¹⁵ Անանիա Նարեկացի. Գիր խոստովանութեան, հրատարակութիւն Միաբանի, արտատպված 1892 թ. «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1892, էջ 2: Ի դեպ, նշված աշխատության՝ Անանիա Նարեկացուն պատկանելու հարցը հանգամանորեն քննարկում է նաև Հ. Թամրազյանը՝ նոր փաստերով հաստատելով Միաբանի տեսակետը (մանրամասն տե՛ս Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի. կյանքը և մատենագրությունը, Եր., 1986, էջ 74-117:

այսպիսին է տարվա վերջին օրը, ապա նույն տրամաբանությամբ այդպիսին պետք է լինի նաև նախորդ հազարամյակի վերջին և հաջորդ հազարամյակի առաջին տարին, նույնիսկ տարիները: Ըստ այդմ՝ 1000, 1001 և 1002 թվականները կարող են դիտվել որպես առաջին և երկրորդ հազարամյակներն իրար կապող և իրարից զատող, քանզի հազարամյակի համար 2-3 տարին այնքան փոքր ու չընչին մեծություն է, որ դրանցից յուրաքանչյուրը, անգամ 1003 թ.-ը կարող է դիտվել նաև սկիզբ: Հայտնի է նաև, որ բովանդակային իմաստով նոր հարյուրամյակի, առավել ևս հազարամյակի առաջին տարիները ավելի շատ հնի արդյունք են, քան նորի: Չէ՞ որ նոր հազարամյակը նոր բովանդակությամբ լցվելու, սեփական դեմք ու նկարագիր ստանալու համար պահանջվում է բավական երկար ժամանակ, որը կարող է տևել ոչ թե 1-2 տարի, այլ տարիներ և նույնիսկ՝ տասնամյակ: Մենք նույնպես ապրում ենք նույնպիսի ժամանակաշրջանում, երբ իսկապես դժվար է որոշել հնի ու նորի սահմանագիծը: Օրինակ, ով կարող է որոշել, թե 2001թ. սեպտեմբերի 11-ի Նյու Յորքի աշխարհացունց ահաբեկչությունը ո՞ր հազարամյակի ծնունդ էր՝ երկրորդ, թե՞ երրորդ: Այո՛, ճիշտ է, որ ձևականորեն այն կատարվեց երրորդ հազարամյակի առաջին տարում, բայց ո՞վ չգիտի, որ այն արդյունք էր նախորդ հազարամյակի վերջի ոչ թե տարիների, այլ տասնամյակների ընթացքում տեղի ունեցած բացասական կուտակումների: Ըստ այսմ, խիստ ուշագրավ է, որ գլխի վերջում բանաստեղծն այնուամենայնիվ կարողանում է սանձել իր մտքի ընթացքը՝ ավարտելու համար միանգամայն լավատեսական ոգով՝ ասելով.

**Իսկ ես ոչ գրեմ զանձն իմ կենդանի՝
Վասն անփախչելի վախճանին,
Դարձեալ զի ոչ վարկանիմ կորուսեալ՝
Վասն աներկեւան նորոգմանն:**

Սա ոչ միստիկա է և ոչ էլ բառախաղ, այլ սեփական իրավիճակի բանաստեղծական ճիշտ ձևակերպում՝ պայմանավորված դարաշրջանի կենսափիլիսոփայությամբ: Թերևս նախորդ հազարամյակում, երբ դեռ ինքը վերնային ու տոնելի էր, այսինքն՝ ուներ երկնային կյանքի հույսն ու ձգտումը, կարող էր իր անձը գրել կենդանի, իսկ այժմ՝ նոր հազարամյակի սկզբին, երբ դարձել էր անդնդային ու աշխարելի, այսինքն՝ երկրային ու մահկանացու, որի դեպքում մահ-վախճանն անփախչելի կամ անխուսափելի է, այլևս չի կարող իր անձը գրել կենդանի, քանզի դա կլիներ անբնական ու անբանական ինքնախաբեկություն: Բայց, ի պատիվ բոլորանվեր հավատացյալ հաճնարի, պետք է ասել, որ նույնիսկ նման կացության մեջ նրան չի լքում «աներկեւան նորոգման» հույսը, ուստի իրեն չի հայտարարում կորուսյալ: Եվ հենց նույն անհուսության ու հույսի հերթագայությամբ էլ բանաստեղծն ավարտում է քննության առարկա գլուխը.

**Որ եւ փակեալ համարիմ ինձ զելս կենացո՝
Վասն անքաւելեացն պարտեաց,
Դարձեալ բացեալ ինձ դրախտն՝
Վասն փրկութեան արեւտեաց,
Քանզի ոչ այնքան վհատութեան գոյժ տագնապէ,
Որչափ փրկութեանդ քաջալերեալ՝ ձեռն կարկաւտէ:
Արդ, տու՛ր, տէր, տու՛ր ողորմութիւն՝
Առ ամենայն ձայն գոհաբանեալ, արհնեալ յափտեան:**

Ինչպես դժվար չէ տեսնել, մի կողմից բանաստեղծն անքավելի պարտքերի պատճառով իր համար փակված է համարում կենաց ճանապարհը, իսկ մյուս կողմից՝ դրախտը բացված, և դա շնորհիվ այն բանի, որ նրան ոչ այնքան վհատության գույժն է տագնապեցնում, որքան տիրոջից սպասած փրկությամբ քաջալերված՝ «ձեռն կարկաւտէ»:

Կարծում եմ, վերը ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ X դ. հայ հանճարի գլուխգործոց ստեղծագործությունը պետք է դիտել ոչ թե որպես միայն աղոթագիրք, այլ նախ և առաջ իբրև իսկապես ողբերգություն, ինչպես այն անվանել է հեղինակն ինքը: Այդ դեպքում շատ ու շատ բան կհասկացվի այլ կերպ, քան հասկացվել է մինչև այժմ, որ ավելի կարևոր է, այլևս չի ասվի, թե Մատյանում գրեթե ոչինչ չկա բանաստեղծի անձնական կյանքի ու սարումների մասին, այլ, ընդհակառակը, այսուհետ այն կդիտվի նաև հեղինակի ունեցած անձնական սարումների գեղարվեստական այնպիսի վերարտադրություն, որ հնչում է որպես համամարդկային ողբերգություն. մի բան, որ եղել ու մնում է գրական ցանկացած հանճարեղ ստեղծագործության հիմնական պայման ու չափանիշ: Ի հաստատումն ասվածի՝ կցանկանայի ավարտել «ո՞վ է բանաստեղծը» հարցին XIX դարի դանիացի մեծագույն փիլիսոփա ու գեղագետ, էքզիստենցիալիստական փիլիսոփայության սկզբնավորող Սյորեն Կերկեգորի տված պատասխանով, որը խիստ պատշաճում է հենց Նարեկացուն, որի գոյության մասին մեծ դանիացին պատկերացում իսկ չէր կարող ունենալ: Կերկեգորը գրում է. «Ո՞վ է բանաստեղծը՝ դժբախտ, հոգեկան ծանր տառապանքներ ունեցող մեկը. ողբն ու հառաչանքը նրա շուրթերին վերածվում են սքանչելի երաժշտության: Նրա վիճակը կարելի է համեմատել այն մարդկանց վիճակի հետ, որոնց Ֆալարիսի պղնձե ցլաձև կաթասյում կենդանի այրում էին մարմանդ վառվող կրակի վրա. զոհերը չէին կարողանում բռնակալի համար որպես քաղցրալուր երաժշտություն հնչող իրենց ողբով ցնցել նրա լսելիքը:

Եվ մարդիկ խոնավում են բանաստեղծի շուրջը՝ կրկնելով «Երգի՛ր, էլի՛ երգիր», այլ խոսքով՝ թող հոգիդ ծվատվի տառապանքից, միայն թե քո շուրթերից ելնող լացուկոծը իր հրաշալի ներդաշնակությամբ առաջվա նման հուզի ու հաճույք պատճառի մեզ:

Ամբոխի պահանջը պաշտպանում են նաև քննադատները. դա ճիշտ է, այդպես էլ պետք է լինի՝ համաձայն գեղագիտության օրենքների: Քննադատը, ասենք, նույն բանաստեղծն է, միայն թե նրա սրտում չկան այդպիսի տառապանքներ, իսկ շուրթերին՝ երաժշտություն: Ուստի, ըստ իս, ավելի լավ է լինել հովիվ՝ հասկացված իր հոտից, քան բանաստեղծ՝ սխալ հասկացված մարդկանցից»¹⁶:

Այսպիսով, թե՛ ըստ էության, թե՛ ըստ գեղագիտության օրենքների և թե՛ ըստ հեղինակի խոստովանության՝ հանձին Նարեկացու գլուխգործոցի՝ մենք գործ ունենք հիրավի մարդ անհատի ողբերգական կյանքի բանաստեղծական հանճարեղ արտացոլման հետ, ուստի պետք է հենց այդպես էլ ընկալվի ու գնահատվի: Այլապես բանաստեղծի կրած հոգեկան ահավոր տառապանքները ու դրանցից ծնված, ողբն ու հառաչանքները կշարունակեն հնչել որպես հրաշալի երաժշտություն՝ մնալով չհասկացված ու չբացատրված:

Г. К. МИРЗОЯН - *Молитвенник или «Книга скорби»?* - На основе сопоставительного анализа средневековых толкований и более поздних печатных изданий «Книги скорби» Григора Нарекаци, а также комментариев нового и новейшего времени в статье утверждается, что хотя сам поэт называл свое произведение *мновоплавновым*, тем не менее сложилась традиция, согласно которой оно прочитывалось и прочитывается почти исключительно как свод молитв, молитвенник. В результате такого восприятия существенно обедняется, сужается смысл великой книги, многие ценнейшие ее положения либо остаются без

¹⁶ Сёрен Кьеркегор. Афоризмы эстетика, в кн.: Сёрен Кьеркегор. Наследение и долг. Ростов-на-Дону, 1998, с. 8.

внимания, либо толкуются неверно. В целях поддержанного фактами доказательства своей точки зрения автор статьи детально анализирует 65 главу «Книги скорби», обращая особое внимание на отрывок, который в переводе с древнеармянского (М., 1988, перевод М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян) звучит так:

«Увы» мне здесь тысячекратное,
Ибо был некогда и я небородным,
А ныне я — в бездне;
Некогда радовались мне,
А ныне плачут обо мне.

По глубокому убеждению автора, Нарекаци в этих строчках говорит не об участи своей в загробной жизни, как считают авторитетные исследователи-нарекациеведы А. Нальян и Г. Аветикян, а о своем нынешнем — в момент создания «Книги скорби» - состоянии. Этот момент, совпавший со сменой тысячелетий (поэма датируется 1000-1003-м годами), поэт воспринимает как рубеж двух этапов своей жизни и теперешнее свое состояние («А ныне я — в бездне») противопоставляет предыдущему, «небородному», возвеличенному. Другими словами, поэт говорит о своем падении «в бездну» при жизни, о своей земной трагедии.

Автор настаивает на том, что именно так следует читать и понимать «Книгу скорби»: она не молитвенник, а повествование о реально пережитой драме, трагедии, которую гений армянского средневековья передал с такой силой психологического обобщения, с таким постижением общечеловеческой трагедии, скрыв при этом в глубинах текста индивидуальную первооснову драмы, что создается впечатление, как будто нет в «Книге» ничего или почти ничего о жизни и судьбе самого поэта. Что касается молитвы, то она выступает здесь в качестве одного из многих литературных приемов, которые использует великий поэт.